ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 6
ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության
մարզային հանձնաժողովի նիստի

11.06.2019թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամներ, Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի և Ալավերդու զբաղվածության տարածքային կենտրոնների տնօրեններ և ծրագրերի պատասխանատուներ, Ձորագյուղ, Ազնվաձոր, Դարպաս, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Գեղասար և Ալավերդի համայնքների ղեկավարներ/ներկայացուցիչներ, ծրագրերի տարածաշրջանային խորհրդատուներ:

Օ ր ա կ ա ր գ ա ն մ՝

1. ՀՀ Լոռու մարզպետի 30.05.2019թ. թիվ 367-Ա որոշման ներկայացում /Հանձնաժողովի նախագահի փոփոխություն/:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգի պահանջներին համապատասխան նախորդ նիստից հետո ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

3. Տեղեկատվության տրամադրում ՀՀ Լոռու մարզում իրականացվող ծրագրերի ընթացքի մշտադիտարկման /մոնիթորինգի/ արդյունքների ներկայացում.

ա/ Ձորագյուղի համայնքի կողմից իրականացվող «Ձորագյուղի թիվ 1 գերեզմանատան պատի վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ընթացքի մասին:

բ/ Ազնվաձոր համայնքի կողմից իրականացվող «Գերեզմանների ցանկապատում և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ընթացքի մասին

գ/ Դարպաս համայնքի կողմից իրականացվող «Մանկապարտեզի խաղահրապարակի կառուցման և բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ընթացքի մասին:

/Զեկ.՝ Ձորագյուղ համայնքի ղեկավար Ա.Ռամազյան, Ազնվաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հովսեփյան, Դարպաս համայնքի ղեկավար Արմեն Ալոյան, Գուգարքի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու Վալերի Ջաղինյան, Վանաձորի ՋՏԿ-ի տնօրեն Արա Առաքելյան/

դ/ Լոռի Բերդ համայնքի կողմից իրականացված «Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և Ագարակ, Յաղդան, Կողես բնակավայրերի պուրակների բարեկարգում և կառուցում» ծրագրի ընթացքի մասին:

ե/ Գյուլագարակի համայնքի կողմից իրականացվող «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ընթացքի մասին:

/Զեկ.՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավարի օգնական Խաչիկ Բալայան, Գյուլագարակ համայնքի ծրագրի պատասխանատու Վրույր Այվազյան, Ստեփանավանի

տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու Վաղարշակ Եղիազարյան, Ստեփանավանի ՀՏԿ-ի տնօրեն Ստեփանավանի ՀՏԿ-ի գլխավոր մասնագետ, ծրագրի պատասխանատու Գևորգ Դավթյան/

զ/ Գեղասար համայնքի կողմից իրականացվող «Բնակչության սոցիալական պաշտպանության /ծիսակատարությունների և հանդիսության սրահ/ հաստատության վերանորոգում և տարածքի բարեկարգում» ծրագրի ընթացքի մասին:

/Զեկ.՝ Գեղասար համայնքի ղեկավար Վարազդատ Գրիգորյան, Սպիտակի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու Գայանե Բոջուկյան, Սպիտակի ՀՏԿ-ի տնօրեն Գագիկ Ստեփանյան/

է/ Ալավերդի համայնքի կողմից իրականացվող «Ալավերդի համայնքի գերեզմանատան ցանկապատում» ծրագրի ընթացքի մասին:

/Զեկ.՝ Ալավերդու քաղաքապետարանի աշխատակից Հրայր Նազարյան, Թումանյանի տարածաշրջանում իրականացվող ծրագրի խորհրդատու Իրինա Գրիգորյան, Ալավերդու ՀՏԿ-ի տնօրեն Նունե Անտաշյան/

4. Գուգարքի տարածաշրջանի Ձորագյուղի համայնքի կողմից իրականացված «Ձորագյուղի թիվ 1 գերեզմանատան պատի վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ավարտական աշխատանքների մասին:

Ձորագյուղ համայնքի ղեկավար Արշակ Ռամազյան, Վանաձորի ՀՏԿ-ի տնօրեն Արա Առաքելյան, Գուգարքի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու Վալերի Ջաղինյան/

5. Ստեփանավանի տարածաշրջանի Լոռի Բերդ համայնքի կողմից իրականացված «Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և Ագարակ, Յաղդան, Կողես բնակավայրերի պուրակների բարեկարգում և կառուցում» ծրագրի ավարտական աշխատանքների մասին:

Լոռի Բերդ համայնքի ղեկավարի օգնական Խաչիկ Բալայան, Ստեփանավանի ՀՏԿ-ի կենտրոնի գլխավոր մասնագետ, ծրագրի պատասխանատու Գևորգ Դավթյան, Ստեփանավանի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու Վաղարշակ Եղիազարյան/

6. Այլ հարցեր:

Հանձնաժողովը ո ր ո շ ե ց՝

Ա ր ձ ա ն ա գ ր ե լ՝

1. Ձորագյուղի համայնքի կողմից իրականացված «Ձորագյուղի թիվ 1 գերեզմանատան պատի վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ավարտը:

2. Լոռի Բերդ համայնքի կողմից իրականացված «Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և Ագարակ, Յաղդան, Կողես բնակավայրերի պուրակների բարեկարգում և կառուցում» ծրագրի ավարտը:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

Ներկայացնել ավարտված ծրագրերի մասին ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ,

2. Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Ջանազյանին՝

Կազմակերպել մասնագիտական խմբի կողմից այցելություն Գեղասար համայնք, տեղում Բնակչության սոցիալական պաշտպանության /ծիսակատարությունների և հանդիսության սրահ/ հաստատության վերանորոգումից հետո ուսումնասիրել և ներկայացնել նոր կառուցված կենտրոնի հետագա կենսունակության համար առաջարկություններ:

3. Ստեփանավանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն Մկրտիչ Գրիգորյանին և Գյուլագարակ համայնքի ղեկավար Միհեր Գևորգյանին՝

Եռօրյա ժամկետում համալրել «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ» ծրագրի աշխատակիցների ցանկը, կատարված աշխատանքների մասին Հանձնաժողովին ներկայացնել տեղեկատվություն:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/